Ռուզաննա ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

2014 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն և ընդունվել ասպիրանտուրա: 2018 թ.-ից աշխատում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնում: 2018-2020 թթ. սովորել է Texas A&M համալսարանի Ագրոբիզնեսի մագիստրատուրայում: Վերապատրաստվել է աշխարհի տարբեր երկրների համալսարաններում:

https://orcid.org/0000-0003-2226-6435

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵԿՏՈՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՆԸ՝ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

DOI: 10.52174/2579-2989_2024.3-60

Հիմնաբառեր. *արտահանում, արտաքին քաղաքականություն, ԵԱՏՄ, մշակող արդյունաբերություն, ապրանքախումբ*

Վերջերս հայ հասարակության շրջանում ակտիվացել են արտաքին քաղաքական վեկտորը փոխելու տրամադրությունները: Սակայն, ինչպես յուրաքանչյուր փոփոխություն, դա նույնպես ունի իր գինը:

Հոդվածում քննարկվում են Հայաստանի արտաքին քաղաքականության հնարավոր փոփոխության տնտեսական հետևանքները, մասնավորապես՝ արտահանման տեսանկյունից: Վերլուծվում է ԵԱՏՄ անդամակցությունից առաջ և հետո Հայաստանի արտաքին առևտրի շարժընթացը՝ ընդգծելով, որ արտահանումը դեպի ԵԱՏՄ զգալիորեն աճել է թե՛ բացարձակ արժեքով, թե՛ տեսակարար կշռով: Հատկապես մշակող արդյունաբերության ապրանքների գլխավոր շուկան շարունակում է մնալ ԵԱՏՄ-ն, որի մասնաբաժինը ոչ միայն չի նվազում, այլև, ընդհակառակը, ավելանում է: Այս միտումը մեծացնում է Հայաստանի կախվածությունը ԵԱՏՄ շուկայից: Արտաքին քաղաքականության վեկտորը փոխելուց առաջ անհրաժեշտ է բազմազանեցնել արտահանման շուկաները և նվազեցնել ԵԱՏՄ շուկայից կախվածության ռիսկերը:

Վերջին ժամանակներս, մի շարք օբյեկտիվ պատճառներով պայմանավորված, հայ հասարակության շրջանում ակտիվանում են արտաքին քաղաքականության վեկտորը փոխելու տրամադրությունները: Սակայն, ամեն ինչ իր գինն ունի, և եթե նույնիսկ օգուտները երբեմն նկատելի չեն, վնասները կարող են շատ ակնառու լինել: Ուստի, վերացարկվելով քաղաքականությունից, փորձենք արտաքին առևտրի օրինակով գնահատել այն տնտեսական կապերը, որոնք կարող

են վտանգվել քաղաքականության փոփոխության հետևանքով: Հայաստանը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) անդամ է, որից օբյեկտիվ դժգոհություններ ունենալով՝ քննարկվում է անդամակցությունը դադարեցնելու հարցը: ՀԱՊԿ-ը թեև կարողանում է պատճառներ հնարել իր պարտականությունների չկատարման համար և փաստացիորեն օգուտ չի տալիս, սակայն անդամակցությունից դուրս գալը կարող է ոչ միայն անվտանգային, այլև տնտեսական հետևանքներ ունենալ: Համաձայն որոշ փորձագետների կարծիքի՝ ՀԱՊԿ-ը ԵԱՏՄ-ից անջատ չի գործում[1]: Այս համատեքստում նպատակահարմար ենք համարում դիտարկել ԵԱՏՄ երկրների հետ Հայաստանի արտաքին առևտրի շարժընթացը՝ անդամակցությունից առաջ և հետո: Հայաստանը ԵԱՏՄ անդամ է դարձել 2015 թ.-ին[2], ուստի վերլուծությունն իրականացվել է 2014 թ.-ից սկսած:

Այսպես՝ անդամակցությունից ի վեր ՀՀ արտահանումը դեպի ԵԱՏՄ, ընդհանուր առմամբ, աճել է ավելի քան 10, իսկ ներմուծումը՝ 4 անգամ: Եթե բացառենք ռուս-ուկրաինական պատերազմի արդյունքում արտաքին առևտրի աճը և համեմատենք 2021 թ.-ի ցուցանիշների հետ, ապա կտեսնենք, որ արտահանումն աճել է 2.5 անգամ, ներմուծումը՝ 60%-ով: Ընդ որում, դեպի ԵԱՏՄ արտահանման աճի միջին տեմպը (41.4%) 2015-2023 թթ.-ին շուրջ 2 անգամ գերազանցել է ընդհանուր արտահանման աճի տեմպը (23.8%): 2015-2021 թթ. ընթացքում դեպի Բելառուս արտահանումն աճել է 5, դեպի Ռուսաստան՝ 3 անգամ: Թեև առավել տատանողական է եղել արտահանումը դեպի Ղազախստան և Ղրղզստան՝ պարբերաբար աճելով և նվազելով, այնուամենայնիվ, դա նույնպես անգամներով աճել է: Ընդ որում, վերջիններիս հետ Հայաստանը գրեթե միշտ (բացառությամբ Ղազախստանի հետ՝ 2022 թ.-ին) ունեցել է ներմուծմանը շեշտակի գերազանցող դրական առևտրային հաշվեկշիռ: Կարևոր է ընդգծել, որ այս ընթացքում ԵԱՏՄ-ի հետ առևտուրն աճել է ոչ միայն բացարձակ թվով, այլև տեսակարար կշռով (գծապատկեր 1):

Հայաստանի արտահանումը դեպի ԵԱՏՄ մինչ անդամակցելը 21.5% էր, արդեն 2021 թ.-ին՝ 28.2% (գծապատկեր 1), այսինքն՝ ավելացել է շուրջ 30%-ով: Նույն պատկերն է նաև ներմուծման դեպքում: Եթե դիտարկենք 2023 թ.-ի ցուցանիշները, որոնք կրում են ռուս-ուկրաինական պատերազմի ազդեցությունը, ապա ԵԱՏՄ մասնաբաժինը ՀՀ արտահանման կառուցվածքում կկազմի 43%, ներմուծման կառուցվածքում՝ 33%: Ընդ որում, եթե քննարկում ենք արտահանման ապրանքային կառուցվածքը և ուղղությունները միաժամանակ, ապա պարզ է դառնում, որ ՀՀ-ից

ԱՂՅՈՒՍԱԿ 1

ՀՀ-ԵԱՏՄ ապրանքների արտահանման և ներմուծման ծավալները, մլն ԱՄՆ դոլար[3]

	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023
Արտահանում										
Բելառուս	9.0	5.5	13.1	6.9	11.7	17.7	19.0	28.2	76.4	91.7
Ղազախստան	6.9	4.9	5.3	4.9	9.8	5.4	6.2	11.0	18.6	71.2
Ղրղզստան	0.3	0.3	1.1	1.8	1.0	3.2	1.5	2.6	5.7	27.4
ՌԴ	304.6	225.9	373.0	540.5	641.9	718.5	611.0	793.9	2,417.0	3,383.9
ԵԱՏՄ ընդամենը	320.8	236.5	392.5	554.1	664.4	744.7	637.7	835.7	2,517.8	3,574.2
Ներմուծում										
Բելառուս	31.0	33.8	23.2	37.6	38.6	49.8	53.4	57.9	109.9	89.7
Ղազախստան	0.6	0.3	0.7	4.0	3.7	2.9	5.7	7.8	23.6	29.2
Ղրղզստան	0.1	0.1	0.1	0.1	0.3	0.2	0.4	0.2	1.0	0.4
ՌԴ	1,069.3	991.1	990.6	1,165.6	1,259.1	1,483.2	1,465.1	1,785.0	2,636.9	3,881.0
ԵԱՏՄ ընդամենը	1,101.0	1,025.3	1,014.5	1,207.4	1,301.6	1,536.2	1,524.6	1,850.8	2,771.4	4,000.4

[1] Российский эксперт: членство Армении в ОДКБ и ЕАЭС неразделимо из-за вопросов безопасности, https://dzen.ru/video/watch/667188c008551e30329bc459

[2] ԵԱՏՄ, http://www.eaeunion.org/?lang=am#about-history

[3] Աղյուսակը կազմել է հեղինակը՝ UNCOMTRADE տվյալների հիման վրա, https://comtradeplus.un.org/





ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

ԵԱՏՄ և այլ երկրների մասնաբաժինը Հայաստանի արտահանման և ներմուծման կառուցվածքում, %[4]

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Հայաստանի ընդհանուր արտահանման մեջ 10 մլն ԱՄՆ դոլարը գերազանցող, մշակող արդյունաբերական ապրանքախմբերի՝ դեպի ԵԱՏՄ արտահանման արժեքը և մասնաբաժինը[5]

HS	Ապրանքախմբի անվանում	2021		2023	
		Արժեք, մլն ԱՄՆ դոլար	Մասնաբաժին, %	Արժեք, մլն ԱՄՆ դոլար	Մասնաբաժին, %
24	Ծխախոտ և արտադրված ծխախոտի փոխարինիչներ	14.1	5.7	30.9	8.1
22	Խմիչքներ, ալկոհոլ և քացախ	232.5	79.7	324.1	86.0
62	Հագուստի պարագաներ, ոչ տրիկոտաժե	41.3	32.0	101.8	44.9
61	Հագուստ և հագուստի պարագաներ, տրիկոտաժե	47.3	95.0	93.7	96.2
20	Բանջարեղենի, մրգերի, ընկույզների պատրաստուկներ	31.8	73.6	42.6	77.0
39	Պլաստմասսա և դրանից պատրաստված իրեր	5.6	37.7	23.8	60.1
64	Կոշկեղեն	3.4	98.3	35.9	94.9
30	Դեղագործական արտադրանք	11.8	59.4	21.9	66.1
94	Կահույք	5.8	64.8	15.7	54.5
70	Ապակի և ապակյա իրեր	0.5	3.4	3.5	16.2
18	Շոկոլադ և կակաո պարունակող այլ արտադրանք	10.4	61.4	14	68.7
42	Կաշվե իրեր	4.3	89.8	16.9	84.1
21	Տարբեր ուտելի պատրաստուկներ	4.2	57.1	15.9	79.6
32	Ներկեր, պիգմենտներ և այլ գունանյութեր	0.1	12.8	16.4	88.0
38	Քիմիական արտադրանք	12.6	98.2	16.9	97.2
33	Եթերային յուղեր	2.5	56.9	13.2	91.1
23	Սննդի արդյունաբերություն, մնացորդներ և թափոններ, պատրաստի անասնակեր	2.2	98.5	13.4	98.1
63	Տեքստիլ, պատրաստված իրեր	1.8	74.9	8.6	70.2
96	Տարբեր արտադրված ապրանքներ	1.2	54.4	10.0	90.1

[4] Հաշվարկները կատարել է հեղինակը՝ UNCOMTRADE տվյալների հիման վրա, https://comtradeplus.un.org/
[5] Հաշվարկները կատարել է հեղինակը՝ UNCOMTRADE տվյալների հիման վրա, https://comtradeplus.un.org/

արտահանվող մշակող արդյունաբերական ապրանքների զգալի մասն ուղղվում է դեպի ԵԱՏՄ:

Աղյուսակ 2-ում արտացոլված են 2023 թ.-ին ՀՀ ընդհանուր արտահանման մեջ 10 մլն ԱՄՆ դոլարը գերազանցող, մշակող արդյունաբերական ապրանքախմբերը՝ HS երկնիշ դասակարգմամբ: Ավելի մուգ հիմնագույնով նշված են այն ապրանքախմբերը, որոնց զգալի մասն արտահանվում է ԵԱՏՄ: Եթե բացառենք այն ոսկերչական իրերի արտահանումը, որոնք, ՌԴ-ից ներմուծվելով, թեթևակի վերամշակվում և արտահանվում են այլ երկրներ, ինչպես նաև մեքենաների, էլեկտրոնային սարքավորումների, օդանավի մասերի ապրանքախմբերի արտահանումը՝ որպես վերաարտահանում, ապա մշակող արդյունաբերական ապրանքներից ընդամենը 2-3 ապրանքախումբ է, որ ԵԱՏՄ շուկայից կախման մեջ չէ: Այդ ապրանքախմբերից է «Ծխախոտը և ծխախոտի փոխարինիչները», որի արտահանման մեջ ԵԱՏՄ մասնաբաժինը 2023 թ.-ին աճելով՝ կազմել է ընդամենը 8,1% կամ շուրջ 31 մլն ԱՄՆ դոլար: Հաջորդ ապրանքախումբը «Ապակի և ապակյա իրերն» է, որի արտահանման մեջ ԵԱՏՄ մասնաբաժինը 2021-2023 թթ.-ին տատանվել է 3-16%-ի սահմաններում: Ինչ վերաբերում է երրորդ՝ «Ներկեր, պիգմենտներ և այլ գունանյութեր» ապրանքախմբին, ապա վերջինիս մեջ ԵԱՏՄ արտահանման մասնաբաժինը 2021 թ.-ի շուրջ 13%-ից 2023 թ.-ին հասել է 88%-ի, ինչը, հավանաբար, ներառում է նաև վերաարտահանում:

Աղյուսակ 2-ից կարելի է նկատել, որ ՀՀ մշակող արդյունաբերական ապրանքների արտահանման մեջ մեծ կշիռ ունեցող «Խմիչքներ, ալկոհոլ և քացախ» ապրանքախմբի զգալի մասը՝ 80-86%-ը, արտահանվում է ԵԱՏՄ, ընդ որում, վերջինիս մասնաբաժինը շարունակաբար աճում է: Միայն 2023 թ.-ին դա կազմել է 324 մլն ԱՄՆ դոլար: Մյուս ապրանքախմբերից «Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ», «Կոշկեղեն», «Կաշվե իրեր», «Քիմիական արտադրանք», «Սննդի արդյունաբերության մնացորդներ և թափոններ, պատրաստի անասնակեր» ապրանքախմբերի արտահանման ավելի քան 90%-ն ուղղվում է դեպի ԵԱՏՄ երկրներ:

Թեև վերջին տարիներին շատ է խոսվում արտահանման շուկաների բազմազանեցման մասին[6], սակայն մշակող արդյունաբերական ապրանքների արտահանման տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոչ միայն բազմազանեցման մակարդակը չի բարձրացել, այլև 2021 թ.-ի համեմատ 2023 թ.-ին դիտարկված 19 ապրանքախմբից 13-ի դեպքում ԵԱՏՄ՝ առանց այն էլ բարձր մասնաբաժինն էլ ավելի է մեծացել: Այլ կերպ ասած՝ մեծացել է ՀՀ վերամշակող արդյունաբերական ապրանքների կախումը ԵԱՏՄ շուկայից: Ուստի արտաքին քաղաքականության վեկտորը փոխելուց առաջ, նախ և առաջ, անհրաժեշտ է բազմազանեցնել արտահանման ուղղությունները և էապես մեղմել ԵԱՏՄ շուկայից կախվածության ռիսկը, որոնց հասնելը քիչ հավանական է մոտ հորիզոնում, հատկապես որոշ ապրանքախմբերի պարագայում: Հետևաբար, նախ՝ անհրաժեշտ է մշակել նոր, որոշակի շուկաներ ներթափանցելու ռազմավարություն, այնուհետև նշանակալի կշռով հաստատվել դրանցում, ստեղծել ամուր կապեր և ապա միայն մտածել վեկտորի փոփոխության մասին:

[6] ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, https://mineconomy.am/news/2965

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, https://mineconomy.am/news/2965
2. ԵԱՏՄ, http://www.eaeunion.org/?lang=am#about-history
3. Российский эксперт: членство Армении в ОДКБ и ЕАЭС неразделимо из-за вопросов безопасности, https://dzen.ru/video/watch/667188c008551e30329bc459
4. UNCOMTRADE database, https://comtrade-plus.un.org/

Рузанна ТАДЕВОСЯН
Младший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ

АРМЕНИЯ И МИР

ЭКОНОМИЧЕСКАЯ ЦЕНА ВОЗМОЖНОГО ИЗМЕНЕНИЯ ВЕКТОРА ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ АРМЕНИИ С ТОЧКИ ЗРЕНИЯ ЭКСПОРТА

В последнее время в армянском обществе активизировались настроения по изменению внешнеполитического вектора. Однако, как и в случае с любыми изменениями, это имеет свою цену. Статья обсуждает возможные экономические последствия изменения внешней политики Армении, особенно с точки зрения экспорта. Анализируется динамика внешней торговли Армении до и после вступления в ЕАЭС, подчеркивая, что экспорт в ЕАЭС значительно увеличился как в абсолютном значении, так и по удельному весу. Главным рынком для продуктов обрабатывающей промышленности продолжает оставаться ЕАЭС, доля которого не только не уменьшается, но и увеличивается. Эта тенденция усиливает зависимость Армении от рынка ЕАЭС. Перед изменением внешнеполитического вектора необходимо диверсифицировать экспортные рынки и снизить риски зависимости от рынка ЕАЭС.

Ключевые слова: *экспорт, внешняя политика, ЕАЭС, обрабатывающая промышленность, товарная группа*

Ruzanna TADEVOSYAN
Junior Researcher at «Amberd» Research Center, ASUE

ARMENIA AND THE WORLD

ECONOMIC COST OF POSSIBLE SHIFTING ARMENIA'S FOREIGN POLICY VECTOR: AN EXPORT PERSPECTIVE

Recently, there has been a growing sentiment within Armenian society towards changing the foreign policy vector. However, as with any change, this shift comes withcosts. This paper discusses the potential economic consequences of a shift in Armenia's foreign policy, particularly from the perspective of exports. It analyzes the dynamics of Armenia's foreign trade before and after joining the EAEU, highlighting that exports to the EAEU have significantly increased both in absolute value and in share. The main market for manufacturing industry continues to be the EAEU, with its share not only sustaining but increasing. This trend heightens Armenia's dependency on the EAEU market. Thus, before altering its foreign policy direction, it is essential to diversify export markets and reduce the risks associated with this dependency.

Keywords: *export, foreign policy, EAEU, manufacturing industry, commodity group*